

# ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՋԱՆ

Աշակերտների աշակցման ծառայությունների գրասենյակ

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նոր աշակերտ արձանագրելիս, ծնողը կամ օրինական խնամակալը բնակավայրը հաստատող փաստաթուղթ և պահանջվող պատվաստումների (immunization) փաստաթուղթը պետք է ներկայացնի, ինչպես նաև լրացնի կրթաշրջանի արձանագրության թերթիկը:

### A. ԲՆԱԿԱՎԱԹՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Երկու (2) բնագիր, ընթացիկ կենցաղային սպասարկման ստացականներ, ծնողի կամ օրինական խնամակալի անունով (Գլենդել ֆաղաֆի, Կալիֆոռնիայի Էդիսոն գործակալության, հեռախոսի, (ընդերկրյա կապի գիծ միայն) Southern California Gas Company-ի, հեռուստակապի (cable) **ԿԱՄ՝**
- Escrow-ի փաստաթղթերը և մեկ (1) ընթացիկ կենցաղային սպասարկման ստացական (Գլենդել ֆաղաֆի, Կալիֆոռնիայի Էդիսոն գործակալության, հեռախոսի, (ընդերկրյա կապի գիծ միայն) Southern California Gas Company-ի, հեռուստակապի (cable), տեղափոխության օրը և մեկ սպասարկման ստացական, սկսելու օրը ցուցադրելով, ինչքան հնարավոր է ձեր տեղափոխությունը մոտ, **ԿԱՄ՝**
- Վարձակալման համաձայնագիր և մեկ (1) կենցաղային սպասարկման ստացական (Գլենդել ֆաղաֆի, Կալիֆոռնիայի Էդիսոն գործակալության, հեռախոսի, (ընդերկրյա կապի գիծ միայն) Southern California Gas Company-ի, հեռուստակապի (cable) կամ այլ կենցաղային սպասարկման ծառայության):

**ՀԻՇԵՑՈՒՄ. Կարող եմ որևէ գործակալության հետ ծառայություններ սկսելու վավերացման մամակը ներկայացնել և ապա, երբ ստանա՞մ ձեր առաջին ստացականը, պետք է այն ներկայացնե՞մ ձեր դպրոցի գրասենյակ: Վավերացումը կկատարի դպրոցը:**

### B. ՏԱՐԻՔԸ ԵՎ ԱՆՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Աշակերտի օրինական անունը պետք է լինի նրա բոլոր դպրոցական փաստաթղթերի վրա:

1. Ծննդյան վկայական
2. Անձնագիր
3. Մկրտության վկայական կամ հիվանդանոցի պաշտոնական ծննդյան փաստաթուղթ (բժշկի ստորագրությամբ):
4. Alien Card
5. Քաղաքացիության վկայական
6. Դպրոցական փաստաթղթեր (միայն երբ փոխադրվում է Գլենդելի մի այլ դպրոցից)

C. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՊԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Արտակարգ իրավիճակների կապի տեղեկություն է պահանջվում, ըստ օրենքի (Կրթական կանոնադրություն, §49408): Խնդրվում է ներկայացնել առնչվող բոլոր դատական փաստաթղթերը:

- Ծնողներից պահանջվում է դպրոց ներկայացնել լրացուցիչ ԵՐԿՈՒ չափահասի հեռախոսահամարներ, որոնք օրվա ընթացքում հասանելի են, երբ ծնողը/խնամակալը անհասանելի է:

D. ԾՆՈՂՆԵՐԸ ԲՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՅԼ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ Այս ֆորմը պահանջվում է *միայն* այն պարագայում, երբ ծնողներն ու աշակերտն ապրում են այլ ընտանիքի հետ և ծնողներն իրենց անունով կենցաղային սպասարկման ստացականներ չունեն: Վավերացման համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Երկու բնագիր ընթացիկ կենցաղային սպասարկման ստացական, բնակչի անունով:
2. Լուսանկարով ինֆլուորություն հաստատող ֆարտ (վարորդական իրավունք կամ ID ֆարտ) և թե՛ բնակչի և թե՛ ծնողի ընթացիկ հասցեները:
3. Ծնողի նախկին բնակավայրի կենցաղային սպասարկման հաշիվը փակելու ստացական:
4. Բնակությունը հաստատող մեկ փաստաթուղթ, ինչպիսին օրինակ՝ կառավարական նպաստի չեֆ (welfare form/check) , դրամատան չեֆ, վարկաֆարտ (credit card), ամսագիր կամ որևէ տեսակի նամակ:

- E. **ԽՆԱՄԱԿԱԼԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ** - Այս բերքիկը պահանջվում է *միայն* այն պարագայում, երբ աշակերտն ապրում է ազգականի հետ: Ներկայացրե՛ք այն Աշակերտների աշակցման ծառայությունների բաժանմունք, գործին ընթացք տալու համար:
- F. **ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ** - Արձանագրության համար, խնդրվում է ներկայացնել IEP-ի փաստաթղթեր, եթե հնարավոր է:
- G. **ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ** – Ըստ Կալիֆոռնիա նահանգի կանոնադրության, նախքան արձանագրությունը, պահանջվում է՝ պատվաստումների փաստաթուղթ, բժշկի կամ Քաունսիլի Առողջապահական բաժանմունքի կողմից վավերացված և կամ աշակերտի անձնական գործի պատճենը: Փաստաթղթում պետք է նշված լինի պատվաստումների ամսաթվերը և տարիները:
  1. Պոլիո (OPV և/կամ IPV) **4** դեղաբաժին, կատարված որևէ տարիում: (Բացառությունների համար տեսնել Form HS21b):
  2. Դիֆտերիա, Տետանուս, Կապույտ հագ (DPT/DT) **5** դեղաբաժին, կատարված որևէ տարիում: (Բացառությունների համար տեսնել Form HS21b): Tdap-ի մեկ պատվաստում է պահանջվում 7-րդից մինչև 12-րդ դասարանների աշակերտներից, որը կարող է կատարված լինել 10 տարեկանից հետո, որևէ ժամանակ:
  3. MMR (Կարմրուկ, Խոզուկ, Կարմրախոտ) **1-ին** դեղաբաժինը ծննդյան առաջին տարեդարձի օրը կամ դրանից հետո: 2-րդ դեղաբաժինը պահանջվում է նախակրթարանի աշակերտներից (նախքան արձանագրությունը) և 7-րդ դասարանի աշակերտների համար:
  4. Hepatitis B (Լյարդատապ), **3** դեղաբաժին, պահանջվում է մանկապարտեզի աշակերտներից (նախքան արձանագրությունը): Եթե դեռ 2-րդ դեղաբաժնի ժամանակը չէ, աշակերտը կարող է արձանագրվել:
  5. Վարիսելա (Ջրծաղիկ) – **1** դեղաբաժին պահանջվում է մանկապարտեզի և Կալիֆոռնիայի որևէ նորեկ աշակերտի համար:

➤ **ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻԱՅՆ**

- **Առողջապահական ստուգումներ (CHDPP)** Ըստ նահանգի օրենքի, առողջապահական ստուգումներ են պահանջվում (Առողջապահության և անվտանգության կողմ §124085) առաջին դասարանի աշակերտների համար: Առողջապահական ստուգումներ են պահանջվում Անցումային նախակրթարանի և մանկապարտեզի տարիք ունեցող աշակերտների համար, որը պետք է կատարված լինի արձանագրության օրից ոչ ուշ քան 18 ամսվա ընթացքում՝ նախքան առաջին դասարան սկսելը: Ձեր գավակը, առաջին դասարանում՝ **դեկտեմբերի 1-ին**, դուրս կամա դպրոցից, եթե վերոհիշյալ պահանջվող բժշկական փաստաթղթերը չեն ներկայացվել գրասենյակ:
- **Ատամների ստուգում** Պահանջվում են, ըստ նահանգի օրենքի, (Կրթական կանոնադրություն, §49452.8) Անցումային մանկապարտեզի և մանկապարտեզի տարիք ունեցող աշակերտների համար, նախքան առաջին դասարան սկսելը: Այս ստուգումը **կարող է կատարված լինել մանկապարտեզ արձանագրվելուց 12 ամիս առաջ, քայց ոչ ուշ քան մայիսի 31-ը:**

**ՀիՇեՑՈՒՄ. Կարող ե՛ք անվճար պատվաստումներ ստանալ ձեր 17-ը և ավելի փոքր տարիքի երեխաների համար Glendale Community Health Center-ում, որի հասցեն է՝ 501 North Glendale Ave. Glendale, CA 91206, հեռախոս՝ (818) 500-5762:**

**H. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ/ԴՊՐՈՑԻ ՏՎՅԱԼՆԵՐ**

1. Բոլոր աշակերտներից պահանջվում է նախորդ դպրոցի վերջին վիճակագրյալը: Արձանագրությունից հետո դպրոցը պաշտոնական պատճեն կպահանջի:
2. Եթե արձանագրվող աշակերտն արտասահմանից է, ապա կարելի է վկայական անձամբ ներկայացնել **կնքված** փակ ծրարով, քայց պետք է քնօրինակը լինի մայրենի լեզվով: Դպրոցը, պաշտոնական պատճենը Աշակերտական ծառայությունների գրասենյակ կուղարկի թարգմանության համար: Թարգմանված վկայական չի ընդունվի: Աշակերտը կտեղավորվի իր տարիքին համապատասխան դասարանում, մինչ թարգմանության ստանալը, որից հետո կկատարվեն դասարանային հարմարեցումները: Ոչ մի աշակերտ չի տեղավորվի ավելի քան մեկ տարի քարձ կամ մեկ տարի ցածր դասարանում:
3. Եթե տվյալները մատչելի չլինեն, աշակերտը կտեղավորվի ըստ իր տարիքի:
4. Քննության գնահատականները, եթե դրանք առկա են:

**I. ԴՊՐՈՑԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ** (ըստ դպրոցի կարող է տարբեր լինել)

**J. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՀԱՐՑԱԽՈՒՅՁ-** Պետք է լրացվի նոր արձանագրվողների կողմից: Եթե նախկինում արձանագրված է եղել Կալիֆոռնիայի հանրային դպրոցներում, ապա պետք է նույն տեղեկությունը տրվի: